Յոթերորդ հաղորդում

Աստծու լիակատար փրկության երկու տեսանկյունները՝ իրավական փրկագնումը՝ օրգանական փրկության հետ համադրված

Գրվածքների ընթերցում. Հռմ 5:10, 21, Հվհ 1:12-13, Ա Պտ 2:25, Հռմ 6:19, 22, Բ Կրթ 4:16, 3:18, Եփս 4:15-16, Հռմ 8:28-29, Փլպ 3:20-21

I. Աստծու լիակատար փրկությունը երկու տեսանկյուն ունի՝ իրավական տեսանկյունն ու օրգանական տեսանկյունը՝ Հռմ 5:10, 21, Հվհ 1:12-13, Ա Պտ 2:25, Հռմ 6:19, 22, Բ Կրթ 4:16, 3:18, Եփս 4:15-16, Հռմ 8:28-29, Փլպ 3:20-21.

Ա. Աստծու փրկության իրավական տեսանկյունը իրագործվեց Քրիստոսի կողմից Նրա մսեղիում Նրա երկրային սպասավորության ֆիզիկական ոլորտում օբյեկտիվորեն՝ Հվհ 1:14, Կոս 1:22.

1. Այն համապատասխանում է Աստծու արդարությանը՝ Հռմ 1:17ա, 3:21-26, 9:30-31:
2. Այն իրագործվում է այն բանի շնորհիվ, որ Աստված կատարեց Իր արդար օրենքի՝ մեղավորներին ներկայացվող բոլոր պահանջները խաչի վրա Քրիստոսի փրկագնող մահվան միջոցով՝ Գոտ 3:13, Ա Պտ 2:24, Բ Կրթ 5:21, Եբր 9:12:
3. Քրիստոսն իրականացրեց Իր երկրային սպասավորությունը՝ իրագործելով Աստծու իրավական փրկագնումը, ինչը հանգեցրեց հետևյալ օբյեկտիվ արդյունքներին.
   - ա. Հավատացյալների մեղքերի ներումը՝ Ղկս 24:47, Եփս 1:7:
   - բ. Հավատացյալների մեղքերի լվացումը՝ Եբր 1:3:
   - գ. Հավատացյալների արդարացումը՝ Հռմ 3:24-25:
   - դ. Հավատացյալների, որոնք Աստծու թշնամիներն էին, հաշտեցումը Նրա հետ՝ 5:10ա:
   - ե. Հավատացյալների՝ որպես Իր սուրբ ժողովրդի, դիրքով սրբացումն առ Ինքը՝ Ա Կրթ 1:2, Եբր 13:12, 10:29:

Բ. Աստծու իրավական փրկագնումը Աստծու լիակատար փրկության միջոց է, որի շնորհիվ հավատացյալները մասնակցում են Աստծու օրգանական փրկությանը՝ որպես Աստծու լիակատար փրկության նպատակին՝ Հռմ 5:21:

Գ. Աստծու օրգանական փրկության բոլոր բաղադրիչները իրականացվում են ոչ թե մսեղիում եղող Քրիստոսի կողմից Նրա երկրային սպասավորության մեջ իրավականորեն ու օբյեկտիվորեն, այլ Քրիստոսի՝ որպես կենդանարար Հոգու կողմից Նրա երկնային սպասավորության մեջ օրգանապես ու սուբյեկտիվորեն՝ Ա Կրթ 15:45բ:

II. Աստծու փրկության օրգանական տեսանկյունը իրականացվում է Քրիստոսի՝ որպես կենդանարար Հոգու կողմից Քրիստոսի երկնային սպասավորության աստվածային և առեղծվածային ոլորտում սուբյեկտիվորեն հետևյալ ութ փուլերով.

Ա. Վերածնունդը Աստծու լիակատար փրկության կենտրոնն է ու Աստծու փրկության սկիզբը՝ դրա օրգանական տեսանկյունով.
   1. Վերածնունդն աստվածային կյանքի վերարտադրությունն է հավատացյալների մեջ Աստծու կյանքը ներդնելու միջոցով՝ փրկագնված հավատացյալներին իրենց հոգում Աստծու Հոգով վերածնելու և վերստին ստեղծելու նպատակով՝ Հվի 3:6բ:
   2. Այն իրագործվում է Քրիստոսի հարության միջոցով, որպեսզի Նա կարողանա հավատացյալների մեջ ներդնել Իր կյանքը՝ որպես իշխանություն, որը նրանց թույլ է տալիս լինել Աստծուց որպես Նրա կենսաբանական տեսակը ծված Աստծու զավակներ՝ Ա Պտ 1:3, Հվի 1:12-13:
   3. Վերածննդի միջոցով հավատացյալները ձեռք են բերում Աստծու հավիտենական աստվածային կյանքը՝ ի հավելում իրենց բնական, մարդկային կյանքի՝ 3:15, 36:

Բ. Հովվելու մեջ կերակրելը աստվածային կյանքի սնելն է.
   1. Կերակրելը վերածննդի շարունակությունն է, որն իրականացվում է այն բանի միջոցով, որ Քրիստոսը հովվում է Իր հոտը՝ այն սնելով ու փայփայելով, որպեսզի Իր ոչխարներն աճեն աստվածային կյանքում առ հասունություն՝ Եփս 5:29, Հվի 10:10-11, 14-16, 21:15-17, Եբր 13:20, Ա Պտ 5:4, 2:25:
   2. Կերակրելը սնում է նորածին մանուկներին (նորահավատներին), որպեսզի նրանք աճեն ու աստիճանաբար փրկվեն Աստծու խոսքում եղող կաթի մատակարարման շնորհիվ՝ խ. 2:
   3. Կերակրելը հանգեցնում է հավատացյալների՝ աստվածային կյանքում հասունանալուն, որպեսզի նրանք արդյունքում փոխակերպվեն ու կերպարանակցվեն Քրիստոսի պատկերին՝ Բ Կրթ 3:18, Հռմ 12:2, 8:29:
   4. Կերակրելը նաև տեղի է ունենում հավատացյալների կողմից փոխադարձ հովվության միջոցով Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու և Աստծու հավիտենական մտահղացման իրականացմանը հասնելու նպատակով՝ Եփս 4:11-16, Հվի 21:15-17, Ա Պտ 5:2-3:

Գ. Ըստ նախահակման սրբացումը հավատացյալներին կազմում է Աստծու աստվածային բնությամբ.
   1. Դա հավատացյալների ներքին սրբացումն է, որոնք աճում են աստվածային կյանքում իրենց նախահակման մեջ Սուրբ Հոգու՝ կյանքի Հոգու աշխատանքի շնորհիվ՝ Հռմ 15:16, 8:2:
   2. Հավատացյալները սրբանում են Աստծու աստվածային, սուրբ բնությամբ, որպեսզի սուրբ լինեն առ Աստված և այդպիսով իսկ կատարեն Աստծու մտահղացումն իրենց ընտրելիս՝ Բ Պտ 1:4, Եփս 1:4:
   3. Ըստ նախահակման սրբացումը փոխակերպում է ենթադրում՝ Հռմ 6:19, 22:

4. Սրբացումն ի վերջո կդրսևորվի Նոր Երուսաղեմում՝ որպես սուրբ քաղաքում՝ Հյտ 21:2, 10, 22:19:

Դ. Նորոգումն Աստծու նոր ստեղծագործության գործընթացն է.
1. Հավատացյալներն ինքնաբերաբար նորոգվում են, երբ նրանց սրբացնում է Սուրբ Հոգին՝ Բ Կրթ 5:17:
2. Նորոգումը վերածննդի լվացման շարունակությունն է և հիմնված է սրբացման շարունակական գործընթացի վրա, ինչի շնորհիվ հավատացյալները նոր են դառնում:
3. Նորոգումն իրականացվում է.
   ա. Այն բանի շնորհիվ, որ նորոգող Հոգին միաձուլվում է հավատացյալների վերածնված հոգու հետ, որտեղ բնակվում է Քրիստոսը, որպես մեկ հոգի՝ տարածվելով հավատացյալների մտքի մեջ և նորոգելով նրանց ողջ էությունը որպես նոր մարդու անդամների՝ Տտս 3:5, Եփս 4:23:
   բ. Այն բանի շնորհիվ, որ հավատացյալները հարության մեջ քայլում են կյանքի նորության մեջ՝ Հռմ 6:4, Եփս 4:22-24, Փլպ 1:19-21:
4. Նորոգումը տեղի է ունենում հավատացյալների միջավայրի պատճառած չարչարանքների քայքայման արդյունքում՝ Բ Կրթ 4:16:
5. Հավատացյալները պետք է հանգամանորեն և ամբողջովին նորոգվեն, որպեսզի գործնականում լինեն Աստծու և Աստծու համար եղող նոր ստեղծագործությունը՝ Գղտ 6:15:
6. Նորոգումն այնպես է անում, որ հավատացյալները դառնում են նույնքան նոր, որքան Նոր Երուսաղեմը՝ Հյտ 21:2:

Ե. Փոխակերպումը նյութափոխանակական գործընթաց է աստվածային կյանքում.
1. Այս գործընթացը փոխակերպում է հավատացյալների ողջ էությունը՝ սկսած մտքի նորոգումից, որպեսզի նրանք լիարժեքորեն մասնակցեն Աստծու աստվածայնությանը՝ Հռմ 12:2բ:
2. Փոխակերպումը ոչ թե որևէ տեսակի արտաքին ուղղում կամ շտկում է, այլ յուրատեսակ նյութափոխանակություն, որը կատարվում է նրանց էության մեջ Քրիստոսի աստվածային տարրի ավելանալու շնորհիվ, որն արտաքուստ արտահայտվում է՝ որպես Քրիստոսի պատկերը:
3. Փոխակերպումն իրագործվում է Տեր Հոգու (պնևմատիկ Քրիստոսի) կողմից, ով հավատացյալներին փոխակերպում է Քրիստոսի փառքի պատկերին՝ Բ Կրթ 3:18:
4. Հավատացյալները պետք է ապրեն ու քայլեն Հոգով (Գղտ 5:16, 25) և քայլեն ձուլված հոգու համաձայն (Հռմ 8:4բ), որպեսզի Քրիստոսի աստվածային կյանքը նրանց կարգավորելու և նրանց փառքում Տիրոջ պատկերին փոխակերպելու հնարավորություն ունենա:

Զ. Կառուցումը աստվածային կյանքում միակցվելն ու միահյուսվելն է.
1. Աստծու կառույցն առաջանում է միակցվելու և միահյուսվելու արդ-

յունքում հավատացյալների վրա փոխակերպող Հոգու աշխատանքի շնորհիվ՝ Եփս 4:16:

2. Կառուցումը հավատացյալների՝ ամեն բանում Գլխի՝ Քրիստոսի մեջ ներաճելու հետևանքն է՝ խ. 15, Կոլ 2:19:
3. Դա Քրիստոսի Մարմնի կառուցումն է, որը կավարտուցացնի սուրբ քաղաքի՝ Նոր Երուսաղեմի կառուցումը՝ Եփս 4:16, Հյտ 3:12, 21:10-11:

Է. Կերպարանակցումը հասունությունն է աստվածային կյանքում.

1. Կերպարանակցումը հավատացյալների՝ աստվածային կյանքում վերածննդի, կերակրման, սրբացման, նորոգման ու փոխակերպման ավարտունությունն է՝ Հռմ 8:28-29:
2. Կերպարանակցումը տեղի է ունենում, երբ հավատացյալները հասունացնող Հոգու շնորհիվ աստվածային կյանքում հասունության են հասնում իրենց հոգում, որը հարստացվել է Քրիստոսի կողմից՝ դառնալով չափահաս այր, որը հասել է Քրիստոսի լեցունության հասակի չափին՝ Կոլ 1:28, Եփս 4:13:
3. Կերպարանակցումը կերպարանակցվելն է Աստծու անդրանիկ Որդու պատկերին՝ Փլպ 3:10, 1:19-21ա, Ա Հվի 3:2:

Ը. Փառավորումը Աստծու լիակատար փրկության բարձրագույն դրսևորումն է.

1. Վերածննդի ժամանակ Աստված վերածնված հավատացյալներին կնքում է Իր Հոգով առ փրկագնման օրը՝ Եփս 1:13, 4:30:
2. Հասունացած հավատացյալները փառավորվելու են ներսից՝ ողջ կյանքի ընթացքում Աստծու փառքով հագենալու շնորհիվ, և դրսից՝ Աստծու փառքի մեջ իրենց բերվելու միջոցով՝ խ. 30, Բ Թսղ 1:10, Հռմ 8:23, 30, Եբր 2:10:
3. Հասունացած հավատացյալների փառավորումն Աստծու օրգանական փրկության մեջ նրանց աստվածային որդիության բարձրագույն բաժինն է, որդիություն, որը նրանք ստացել են իրենց վերածննդի ժամանակ՝ Գղտ 4:5, Հռմ 8:23:
4. Հավատացյալների մարմնի փրկագնումը նրանց մարմնի այլակերպումն է Տիրոջ վերադարձի ժամանակ՝ Փլպ 3:20-21:
5. Փառավորման միջոցով Աստված ի կատար է ածում Իր հավիտենական մտահղացումը՝ Նոր Երուսաղեմը՝ Իր վերածնված, փոխակերպված, կերպարանակցված ու փառավորված եռամաս ընտրյալների հետ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու միության ու միաձուլման բյուրեղացումը:

III. Աստծու նպատակն Իր օրգանական փրկության այս ութ բաժիններում մեզ պարզապես Աստված դարձնելն է կյանքով, բնությամբ և արտահայտությամբ, բայց ոչ Աստվածությամբ, այսինքն՝ մեզ Աստծու կրկնօրինակը, «պատճենը» դարձնելը. <u>«Հոգին Ինքը մեր հոգու հետ» Աստծու օրգանական փրկության գաղտնիքն է.</u>

Ա. Վերածնող Հոգին մեր հոգում, որը կենդանացված է Քրիստոսի կողմից, վերածնում է մեզ՝ մեզ տալով Աստծուց ծնված Աստծու զավակներ լինելու իշխանություն:

Բ. Սնող Հոգին մեր հոգում, որը փայփայում է Քրիստոսը, մեզ կերակրում է Խոսքի հոգևոր կաթով, որպեսզի մենք աճենք առ փրկություն:

Գ. Սրբացնող Հոգին մեր հոգուց, որը գերված է Քրիստոսի կողմից, մեզ սրբացնում է Աստծու բնությամբ՝ մեզ սուրբ դարձնելով առ Աստված:

Դ. Նորոգող Հոգին մեր հոգում, որտեղ բնակվում է Քրիստոսը, մեզ նորոգում է, որպեսզի հագնենք նոր մարդուն խաչի ջախջախման միջոցով:

Ե. Փոխակերպող Հոգին մեր հոգում, որը լցված է Քրիստոսով, մեզ փոխակերպում է Քրիստոսի փառավոր պատկերին Նրա արտահայտության համար:

Զ. Կառուցող Հոգին մեր հոգում, որին տիրել է Քրիստոսը, մեզ ներկառուցում է Աստծու տան և Քրիստոսի Մարմնի մեջ՝ Նրանց բնակության համար:

Է. Հասունացնող Հոգին մեր հոգում, որը հարստացած է Քրիստոսով, մեզ կերպարանակցում է Քրիստոսի՝ Աստծու անդրանիկ Որդու պատկերին, ով նմուշօրինակ է Աստծու որդիների համար:

Ը. Կնքող Հոգին մեր հոգում, որը ցնծում է Քրիստոսի շնորհիվ, մեզ հագեցնում է Աստծու փառքով և մեզ բերում դրա մեջ մեր փառավորման համար:

© 2023 Living Stream Ministry